

**ԽՈՐՀՐԴԻ 1968 թվականի մարտի 9-ի թիվ 68/151/ԵՏՀ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՀԱՆԳ**

**Երաշխիքների համաձայնեցման մասին, որոնք անդամ պետությունները, անդամների և այլոց շահերի պաշտպանության նպատակով, պահանջում են ընկերություններից Համաձայնագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով՝ նպատակ ունենալով նման երաշխիքները համարժեք դարձնել Համայնքի ամբողջ տարածքում**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը, և մասնավորապես դրա հոդված 54«3»«է»-ն,

հաշվի առնելով Հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման մասին ընդհանուր ծրագիրը և մասնավորապես դրա VI գլուխը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը.

քանի որ հոդված 54«3»«է»-ում և Հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման մասին ընդհանուր ծրագրում սահմանված համաձայնեցումը հրատապ հարց է, հատկապես, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առումով, քանի որ նման ընկերությունները գործունեությունը հաճախ ներպետական տարածքների սահմաններից դուրս է տարածվում,

քանի որ նման ընկերությունների կողմից տեղեկությունների հրապարակման, դրանց պարտավորությունների վավերականության և դրանց գրանցման անվավերության մասին ներպետական դրույթների համաձայնեցումը հատուկ կարևորություն է ներկայացնում, մասնավորապես, երրորդ անձանց շահերի պաշտպանության առումով,

քանի որ այս հարցերում նման ընկերությունների առնչությամբ պետք է միաժամանակ ընդունվեն Համայնքի իրավական դրույթներ՝ հաշվի առնելով, որ երրորդ անձանց՝ այդ ընկերությունների կողմից առաջարկվող միակ երաշխիքը նրանց ակտիվներն են,

քանի որ այդ ընկերությունների հիմնական փաստաթղթերը պետք է հրապարակվեն, որպեսզի երրորդ անձինք կարողանան պարզել դրանց բովանդակությունը և ընկերությանը

վերաբերող այլ տեղեկությունները, հատկապես այն անձանց մասին մանրամասն տվյալները, ովքեր լիազորված են պարտավորություններ ստանձնել ընկերության համար,

քանի որ երրորդ անձանց պաշտպանությունը պետք է ապահովվի այնպիսի դրույթներով, որոնք հնարավորինս սահմանափակում են ընկերության անունից ստանձնած պարտավորությունների անվավերության հիմքերը,

քանի որ ընկերության և երրորդ անձանց, ինչպես նաև մասնակիցների միջև հարաբերությունների առնչությամբ իրավական նորմերի հստակություն ապահովելու համար անհրաժեշտ են սահմանափակել գրանցման անվավերության և գրանցումն անվավեր ճանաչելու հետադարձ ուժի դեպքերը և սահմանել կարճ ժամկետ, որի ընթացքում երրորդ անձինք կարող են անվավեր ճանաչելու դեմ առարկություն ներկայացնել,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### **Հոդված 1**

Սույն Հրահանգով նախատեսված համաձայնեցման միջոցները կիրառվում են անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի նկատմամբ, որոնք վերաբերում են հետևյալ տեսակի ընկերություններին՝

– Գերմանիայում՝

die Aktiengesellschaft, die Kommanditgesellschaft auf Aktien, die Gesellschaft mit beschränkter Haftung,

– Բելգիայում՝

de naamloze vennootschap, la société anonyme,

1. ՊՏ No 2, 15.01.1962թ., էջ 36/62.

2 ՊՏ No 96, 28.5.1966թ., էջ. 1519/66.

3. ՊՏ No 194, 27.11.1964թ., էջ 3248/64.

– Ֆրանսիայում՝

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée,

– Իտալիայում՝

la società per azioni, la società in accomandita per azioni, la società a responsabilità limitata;

– Լյուքսեմբուրգում՝

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée,

–Նիդերլանդներում՝

de naamloze vennootschap, de commanditaire vennootschap op aandelen.

## ԲԱԺԻՆ I

### Հրապարակայնությունը

#### Հոդված 2

1. Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են ընկերությունների կողմից առնվազն հետևյալ փաստաթղթերի կամ հետևյալի մասին մանրամասն տեղեկությունների պարտադիր հրապարակումն ապահովելու համար՝

ա) հիմնադիր փաստաթուղթ կամ կանոնադրություն, եթե այն առանձին փաստաթղթով է.

բ) «ա» կետում նշված փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն՝ ներառյալ ընկերության գործունեության երկարաձգման մասին.

գ) հիմնադիր փաստաթղթում կամ կանոնադրությունում կատարված յուրաքանչյուր փոփոխությունից հետո՝ հիմնադիր փաստաթղթի կամ կանոնադրության ամբողջական տեքստը՝ ըստ սվյալ պահի փոփոխությունների.

դ) այն անձանց նշանակումը, պաշտոնանկությունը և նրանց վերաբերյալ մանրամասն տվյալները, որոնք որպես օրենքով նշանակված մարմին կամ որպես այդպիսի մարմնի անդամ՝

ի) լիազորված են ներկայացնելու ընկերությունը երրորդ անձանց հետ հարաբերություններում և իրավական վարույթներում.

ii) մասնակցում են ընկերության կառավարման, վերահսկման կամ հսկման գործընթացներին.

Հրապարակումից պետք է պարզ լինի, թե արդյո՞ք ընկերությունը ներկայացնելու իրավասություն ունեցող անձինք կարող են դա անել միայնակ, թե՞ պետք է հանդես գան այլ անձանց հետ միասին:

ե) առնվազն տարին մեկ անգամ տեղաբաշխված կապիտալի չափը, եթե հիմնադիր փաստաթղթում կամ կանոնադրությունում նշվում է կանոնադրական կապիտալի թույլատրված առավելագույն չափը, բացառությամբ երբ տեղաբաշխված կապիտալի ավելացումը պահանջում է փոփոխություններ կատարել կանոնադրությունում.

զ) հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար: Հաշվապահական հաշվեկշիռը պետք է ներառի այն անձանց մասին մանրամասն տվյալները, ովքեր օրենքի համաձայն պետք է հաստատեն այն:

Այնուամենայնիվ, 1-ին հոդվածում նշված և Գերմանիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Լյուքսեմբուրգի իրավունքի համաձայն գործող «Gesellschaft mit beschränkter Haftung, société de personnes à responsabilité limitée, personenvennootschap met beperkte aansprakelijkheid, société à responsabilité limitée and società a responsabilità limitata»-ի, ինչպես նաև Նիդերլանդների իրավունքի համաձայն գործող the «besloten naamloze vennootschap»-ի նկատմամբ սույն դրույթի պարտադիր կիրառությունը հետաձգվում է մինչև հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների բովանդակության համաձայնեցման և նշված փաստաթղթերը լրիվ կամ մասամբ հրապարակելու պարտականությունից այն ընկերություններին ազատելու մասին հրահանգի կիրարկումը, որոնց հաշվապահական հաշվեկշռային հանրագումարը հրահանգում սահմանվածից քիչ է: Խորհուրդը նման հրահանգ կընդունի սույն Հրահանգի ընդունումից հետո երկու տարվա ընթացքում:

է) ընկերության նստավայրի ցանկացած փոփոխություն.,

ը) ընկերության գործունեության դադարումը.

թ) դատարանների կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչելը.

ժ) լուծարողների նշանակումը, նրանց վերաբերյալ մանրամասն տվյալները և նրանց լիազորությունները, բացառությամբ, երբ այդ լիազորությունները բխում են ուղղակիորեն և բացառապես օրենքից կամ ընկերության կանոնադրությունից.

ժա) լուծարման գործընթացի դադարեցումը, ինչպես նաև հաշվառումից հանելը, եթե դա անդամ պետություններում առաջացնում է իրավական հետևանքներ:

2. Պարբերություն 1«գ»-ի իմաստով, այն ընկերությունները, որոնք բավարարում են հետևյալ պայմանները, համարվում են «besloten naamloze vennootschappen»`

ա) նրանք չեն կարող ըստ ներկայացնողի բաժնետոմսեր թողարկել.

բ) որևէ անձ չի կարող թողարկել գրանցված բաժնետոմսերի ըստ ներկայացնողի հավաստագիր Նիդերլանդների առևտրային օրենսգրքի հոդված 42«գ»-ի իմաստով.

գ) նրանց բաժնետոմսերը չեն կարող գնանշվել ֆոնդային բորսայում.

դ) նրանց կանոնադրությունը պարունակում է դրույթ, որով պահանջվում է, որ նախքան բաժնետոմսերը երրորդ անձանց փոխանցելը ընկերությունը հավանություն տա դրան` բացառությամբ մահվան դեպքում կատարվող փոխանցման և կանոնադրությամբ նախատեսված` ամուսնուն, նախնիներին և ժառանգներին փոխանցման դեպքերի. փոխանցագիրը չպետք է լինի ձևաթղթային, այլ պետք է լինի ձեռագիր` ստորագրված փոխանցագրողի և բաժնետոմսի նոր տիրոջ կողմից կամ վավերացվի նոտարական կարգով,

ե) նրանց կանոնադրության մեջ նշված է, որ ընկերությունը besloten naamloze vennootschap է. ընկերության անվանումը ներառում է "Besloten Naamloze Vennootschap" բառերը կամ "BNV" սկզբնատառերը:

### **Հոդված 3**

1. Յուրաքանչյուր անդամ պետությունում յուրաքանչյուր գրանցված ընկերության համար պետք է առանձին գործ բացվի կենտրոնական գրանցամատյանում, առևտրային գրանցամատյանում կամ ընկերությունների գրանցամատյանում:

2. Բոլոր փաստաթղթերը և մանրամասն տեղեկությունները, որոնք պետք է հրապարակվեն` համաձայն 2-րդ հոդվածի, պահվում են գործի մեջ կամ մուտքագրվում են գրանցամատյանում. գրանցամատյանում մուտքագրված տեղեկությունները, ցանկացած դեպքում, պետք է ընդգրկվեն գործի մեջ:

3. 2-րդ հոդվածում նշված փաստաթղթերի կամ տեղեկությունների կամ դրանց մի մասի պատճենը պետք է հնարավոր լինի ձեռք բերել գրավոր դիմումի համաձայն՝ վարչական ծախսերը չգերազանցող վճարի դիմաց:

Պատճենները պետք է վավերացվեն որպես «հավաստի պատճեններ», եթե դիմողը չի պահանջում նման վավերացում:

4. 2-րդ պարբերության մեջ նշված փաստաթղթերի և մանրամասն տեղեկությունների հրապարակումը կատարվում է պետության կողմից այդ նպատակով ստեղծված պաշտոնական տեղեկագրում մասնակի կամ ամբողջական տեքստով հրապարակման միջոցով, կամ գործում ի պահ տրված կամ գրանցամատյանում մուտքագրված փաստաթղթին հղում անելով:

5. Ընկերությունը կարող է երրորդ անձանց հետ հարաբերություններում վկայակոչել փաստաթղթերը և մանրամասն տվյալները միայն 4-րդ պարբերության համաձայն դրանց հրապարակման դեպքում, եթե ընկերությունը չի ապացուցում, որ երրորդ անձինք տեղյակ էին դրանց մասին: Սակայն հրապարակումից հետո մինչև 16-րդ օրը կատարվող գործարքի դեպքում, փաստաթղթերը և մանրամասն տեղեկությունները չեն կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում, եթե նրանք ապացուցում են, որ անհնար էր այդ մասին նախկինում տեղյակ լինել:

6. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում մամուլում հրապարակվածի և գրանցամատյանում կամ գործում գոյություն ունեցողի միջև անհամապատասխանությունից խուսափելու համար:

Այնուամենայնիվ, անհամապատասխանության դեպքում մամուլում հրապարակված տեքստը չի կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում. վերջիններս, այնուամենայնիվ, կարող են վկայակոչել դրանք, եթե ընկերությունը չապացուցի, որ այդ անձինք նախկինում տեղյակ են եղել գործում ի պահ տրված կամ գրանցամատյանում մուտքագրված տեղեկությունների մասին:

7. Ավելին, երրորդ անձինք կարող են վկայակոչել ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկություն, որոնց հրապարակման հետ կապված ձևականությունները դեռ չեն կատարվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ չհրապարակելը հանգեցնում է իրավաբանական ուժի բացակայության:

#### **Հոդված 4**

Անդամ պետությունները պետք է սահմանեն, որ նամակները և այլ ձևերը պետք է ներառեն հետևյալ մանրամասն տվյալները.

- գրանցամատյանը, որտեղ պահվում է 3-րդ հոդվածում նշված գործը՝ այդ գրանցամատյանում ընկերության համարի հետ միասին,
- ընկերության իրավական ձևը, մասնաճյուղի գտնվելու վայրը և, անհրաժեշտության դեպքում, ընկերության գործունեությունը դադարեցնելու փաստը:

Եթե այս փաստաթղթերում հղում է կատարվում ընկերության կապիտալին, ապա դա համարվում է տեղաբաշխված և վճարված կապիտալին կատարված հղում:

#### **Հոդված 5**

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում, թե ովքեր պետք է կատարեն հրապարակման հետ կապված ձևականությունները:

#### **Հոդված 6**

Անդամ պետությունները համապատասխան պատժամիջոցներ են նախատեսում հետևյալ դեպքերում՝

- հոդված 2«1»«գ»-ով նախատեսված հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հրապարակումից խուսափում,
- 4-րդ հոդվածով սահմանված պարտադիր մանրամասն տեղեկությունները առևտրային փաստաթղթերում չներառելը:

## ՄԱՍ II Ընկերության ստանձնած պարտավորությունների վավերականությունը

### Հոդված 7

Եթե մինչև ստեղծվելը, ընկերությունը ձեռք է բերել իրավասուբյեկտություն և նրա անունից գործողություն է կատարվել, և ընկերությունը չի ընդունում այդ գործողությունից բխող պարտավորությունները, ապա այն անձինք, ովքեր իրականացրել են այդ գործողությունը, առանց սահմանափակման համապարտ և բաժնային պատասխանատվություն են կրում դրա համար, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

### Հոդված 8

Եթե կատարված են որպես ընկերության մարմին՝ ընկերությունը ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց մասին մանրամասն տվյալների հրապարակման հետ կապված ձևականությունները, ապա այդ անձանց նշանակման ընթացքում տեղ գտած անճշտությունները չեն կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում, եթե ընկերությունը չի ապացուցում, որ երրորդ անձինք նման անճշտությունների մասին տեղյակ են եղել:

### Հոդված 9

1. Ընկերության մարմինների՝ նույնիսկ դրա նպատակներից դուրս կատարած գործողությունները պարտադիր են ընկերության համար, եթե այդ գործողությունները չեն հանգեցնում այն լիազորությունների սահմանազանցման, որ օրենքը վերապահում կամ թույլատրում է վերապահել այդ մարմիններին:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են սահմանել, որ ընկերության նպատակներից դուրս կատարված նման գործողությունների համար ընկերությունը պատասխանատու չէ այն դեպքերում, երբ ապացուցում է, որ երրորդ անձինք տեղյակ են եղել գործողությունների՝ ընկերության նպատակներից դուրս լինելու մասին կամ, հանգամանքների բերումով, չէին կարող չիմանալ դրա մասին. այս դեպքում կանոնադրության հրապարակումն ինքնին բավարար ապացույց չի կարող լինել:



2. Ընկերության մարմինների լիազորությունների սահմանափակումները, որոնք բխում են կանոնադրությունից կամ իրավասու մարմնի որոշումից, երբեք չեն կարող վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում, նույնիսկ երբ դրանք հրապարակվել են:

3. Եթե ներպետական իրավունքով նախատեսվում է, որ ընկերությունը ներկայացնելու իրավասությունը կարող է, որպես շեղում խնդրո առարկան կարգավորող իրավական նորմերից, կանոնադրությամբ վերապահվել մեկ կամ համատեղ գործող մի քանի անձանց, ապա ներպետական իրավունքով կարող է նախատեսվել, որ կանոնադրության նման դրույթը կարող է վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում՝ պայմանով, որ այդ դրույթը վերաբերում է ներկայացուցչության ընդհանուր իրավասությանը. երրորդ անձանց հետ հարաբերություններում կանոնադրության նման դրույթը վկայակոչելու հարցը կարգավորվում է 3-րդ հոդվածով:

### **ՄԱՍ III Ընկերության գրանցման անվավերությունը**

#### **Հոդված 10**

Այն բոլոր անդամ պետություններում, որոնց իրավական համակարգերը չեն նախատեսում ընկերության ստեղծման ժամանակ կանխարգելիչ վարչական կամ դատական վերահսկողություն, հիմնադիր փաստաթուղթը, ընկերության կանոնադրությունը և այդ փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն կազմվում և վավերացվում են պատշաճ իրավական ձևով:

#### **Հոդված 11**

Անդամ պետությունների իրավական համակարգերով չի կարող նախատեսվել ընկերությունների գրանցման անվավերություն այլ կերպ, քան հետևյալ դրույթների համաձայն.

1. Գրանցումն անվավեր է ճանաչվում դատարանի որոշմամբ.
2. Գրանցումը կարող է անվավեր ճանաչվել միայն հետևյալ հիմքերով՝

ա) չի կազմվել հիմնադիր փաստաթուղթ կամ չեն պահպանվել կանխարգելիչ վերահսկողության կանոնները կամ չեն կատարվել անհրաժեշտ իրավական ձևականությունները.

բ) ընկերության նպատակները հակասում են օրենքին կամ հանրային կարգին.

գ) հիմնադիր փաստաթղթով կամ կանոնադրությամբ չեն սահմանվում ընկերության անվանումը, կապիտալի անհատական բաժանորդագրման չափը, տեղաբաշխված կապիտալի ընդհանուր ծավալը կամ ընկերության նպատակները.

դ) չեն կատարվել վճարվելիք կապիտալի նվազագույն չափի մասին ներպետական իրավունքի պահանջները.

ե) բոլոր հիմնադիրները անգործունակ են.

զ) ի հակասություն ընկերությունների մասին ներպետական իրավունքի, հիմնադիրների թիվը երկուսից պակաս է:

Ընկերության գոյությունը ենթակա չէ դադարման, գրանցումը՝ առոչնչության, վիճարկելիության, անվավեր ճանաչման, գրանցման անվավերության՝ վերը նշված հիմքերից բացի որևէ այլ հիմքով:

## **Հոդված 12**

1. Երրորդ անձանց հետ հարաբերություններում գրանցման անվավերության մասին դատարանի որոշումը վկայակոչելու հարցը կարգավորվում է 3-րդ հոդվածով: Եթե ներպետական իրավունքը որևէ երրորդ անձի իրավունք է վերապահում վիճարկելու այդ որոշումը, վերջինս կարող է որոշումը բողոքարկել միայն դատարանի որոշման պաշտոնական ծանուցումից հետո վեց ամսվա ընթացքում:

2. Ինչպես ընկերության լուծարումը, այնպես էլ գրանցման անվավերությունը հանգեցնում են ընկերության գործունեության դադարման:

3. Անվավերությունը չի ազդում ընկերության կողմից կամ ընկերության հետ ձեռք բերված պարտավորությունների վավերության վրա՝ չսահմանափակելով ընկերության գործունեության դադարման հետևանքները:

4. Յուրաքանչյուր անդամ պետության իրավունքում կարող են դրույթներ նախատեսվել ընկերության մասնակիցների համար գրանցման անվավերության հետևանքների վերաբերյալ:

5. Կապիտալում բաժնեմաս ունեցող անձինք պարտավոր են վճարելու դեռևս չվճարված այն կապիտալը, որին բաժանորդագրվելու մասին համաձայնություն է ձեռք բերվել, այնքան ժամանակ, քանի դեռ դա անհրաժեշտ է պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

## ՄԱՍ IV Ընդհանուր դրույթներ

### Հոդված 13

Սույն Հրահանգի ծանուցումից հետո տասնութ ամսվա ընթացքում անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն իրենց օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի՝ սույն Հրահանգի դրույթների կատարման համար անհրաժեշտ բոլոր փոփոխությունները, և այդ մասին տեղեկացնեն Հանձնաժողովին:

Սույն Հրահանգի ծանուցումից հետո երեսուն ամսվա ընթացքում հոդված 2«1»«գ»-ով նախատեսված հրապարակման պարտականությունն ուժի մեջ չի մտնում, Նիդերլանդների առևտրային օրենսգրքի հոդված 42«գ»-ում նշվածներից բացի, Նիդերլանդների իրավունքի հիման վրա գործող այլ «naamloze vennootschappen»-ի նկատմամբ:

Անդամ պետությունները կարող են սահմանել, որ ընկերության ստեղծման պահից ի վեր փոփոխված կանոնադրության ամբողջական տեքստի նախնական հրապարակում չի պահանջվում մինչև կանոնադրությունում կատարվելիք հաջորդ փոփոխությունները կամ մինչև 1970 թվականի դեկտեմբերի 31-ը՝ կախված այն բանից, թե որն է ավելի վաղ:

Անդամ պետությունները պետք է հետամուտ լինեն ներպետական իրավունքի այն հիմնական դրույթների տեքստերի փոխանցմանը Հանձնաժողովին, որոնք իրենք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

### Հոդված 14

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1968 թվականի մարտի 9-ին:

Խորհրդի կողմից՝ Նախագահ Մ. ԿՈՒՎ դե ՄԵՐՎԻԼ